

ԹՈՒՐԲԻՈՅ ՈՒՇԱՆԻԹԻՆԱԽԱՐԱՐԸ ԱՅՍՕՐ ԻՍՐԱՅԵԼ ԿԸ ՀԱՄԵԻ

ԱՆԳԱՐԱ, 4 (ՌՈՅԹԸՐԸ).- Թուրքիոյ ուժանիւթի նախարար Ջեքի Չաքան Երկուշաբթի օր (այսօր) Իսրայէլ պիտի մեկնի՝ ուժանիւթի եւ ջուրի վերաբերեալ ծրագիրներ քննարկելու համար: Նախարարութիւնը Կիրակի օր հաղորդագրութեան մը մէջ ըսաւ, թէ Չաքան տեսակցութիւն պիտի ունենայ վարչապետ Արիէլ Շարոնի, արտաքին գործոց նախարար Շիմոն Փերէսի եւ այլ պաշտօնատարներու հետ: Թուրքիա Իսրայէլի իսլամ ամենէն սերտ դաշնակիցն է շրջանին մէջ եւ երկու երկիրները պինդորակա գործակցութեան լայնածիր համաձայնութիւններ գոյացուցած են:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԿԱՏԱՐԵՑ ՇԱՊՐՈՒՀԻ ՋՐԱՄԲԱՐԻՆ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ, ՔԵՍՐՈՒԱՆԻ ՄԵՁ ԱՐԺԱՆԱՆԱԼՈՎ ԺՈՂՈՎՐԳԱՅԻՆ ՄԵԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ



Նախագահը կը կատարէ ջրամբարի հիմնարկէքը

Հանրապետութեան նախագահ Կօր. Էմիլ Լահուտ Շաքաթ օր հիմնարկէքը կատարեց Շապրուհի ջրամբարին, որուն կառուցման ծրագիրի գործադրութիւնը Քեարուան կը սպասէ 45 տարիէ ի վեր:

Նախագահ Լահուտ դիտել տուաւ, որ այս ջրամբարը ոչ միայն կը լուծէ Քեարուանի եւ Մեթնի ըմպելի ջուրի հարցերը, այլեւ գործնական թարգմանութիւնն է հաւասարակշռուած բարգաւաճումի սկզբունքին:

Քեարուանի 45 տարուան պահանջին ընդառաջելու պետութեան որոշումը մէկ կողմէ կը հաստատէ Լիբանանի իրաւագուրկ շրջաններուն նկատմամբ արդար գտնուելու պետութեան նախանախնդրութիւնը, ինչպէս նաեւ վճռակամութիւնը գործադրելու հանրօգուտ ծրագիրները, ըսաւ ան եւ բացատրեց, որ թէեւ երկիրը ծանօթ պատճառներով տնտեսական տագնապ կ'ապրի, բայց ահիկա չի նշանակեր, որ պետութիւնը պիտի հրաժարի արդիւնաւետ ծրագիրներէն, մանաւանդ երբ յատկացումը կը կատարուի եւ գումարները կը ծախսուին յարմար ծրագիրներուն վրայ: Ասկէ մեկնելով կոչ կ'ուղղէի ոչ թէ ծախսերը ընդհանրապէս կրճատելու այլ՝ Կանոնք տեղի'ն ընելու, յստակ առաջնահերթութիւններ ճշդող թափանցիկ ծրագիրի մը հիմամբ, աւելցուց ան:

Նախագահ Լահուտ Քեարուանի հեղինակութիւններուն եւ ապրիլի 10-էն սկսած խոստացաւ անձամբ հետեւիլ ծրագիրի ճշդուած թուականին ամբողջացումին, որովհետեւ ինքն իրեն պարտք կը համարէ հետեւիլ բոլոր

պետական վարչութիւններու աշխատանքներուն, մանաւանդ երբ անոնք ուղղակի կապ ունին քաղաքացիին հետ կամ անմիջականօրէն կ'առնչուին անոր շահերուն հետ:

Շապրուհի ջրամբարը մէկ հանգրուանն է րուն մէջ»:



Նախագահը կ'ողջունէ Աշքուի ժողովուրդը, որ ջերմօրէն կը դիմաորէ զինք

բարգաւաճման ընդհանուր ծրագիրի մը, որուն կարիքը ունի շրջանը, ըսաւ ան յայտնելով, որ պատկան մարմիններուն թելադրած է ուսումնասիրել շրջանի պահանջները կը ծախսուին յարմար ծրագիրներուն վրայ: Ասկէ մեկնելով կոչ կ'ուղղէի ոչ թէ ծախսերը ընդհանրապէս կրճատելու այլ՝ Կանոնք տեղի'ն ընելու, յստակ առաջնահերթութիւններ ճշդող թափանցիկ ծրագիրի մը հիմամբ, աւելցուց ան:

Նախագահ Լահուտ ըսաւ, որ «իսլամը անիծելը ամենէն դիւրինն է, բայց աւելի օգտակար է ընդհանուր ճիգով մտ վառել, իսկ Շապրուհի ջրամբարը այն սկիզբն է, այն օրինակն է, որուն պէտք է հետեւիլ բոլոր լիբանանեան շրջաններուն մէջ»:

Ան դրուատեց քեարուանցիներու համբերատարութիւնն ու այս ծրագիրի գործադրութեան հետապնդումին մէջ վճռակամութիւնը:

Նախագահ Լահուտ նաեւ շնորհակալութիւն յայտնեց քեարուանցիներուն մէջ: Մնացորդները համբերատարութեամբ սպասեցին իրենց ծրագրին իրականացմանը: Մնացորդները համբերատարութեամբ սպասեցին իրենց ծրագրին իրականացմանը:

Մնացորդները համբերատարութեամբ սպասեցին իրենց ծրագրին իրականացմանը:

Նախագահ Լահուտ հիմնարկէքի հանդիսութեան վայրը՝ Ֆարաճի հասնելէ առաջ ժողովրդային մեծ ընդունելութիւն կատարեց: Քեարուանի բոլոր շրջաններուն մէջ, սկսելով Քեարուանի մուտքէն՝ Չուք Մուսայիէն: Նախագահ Լահուտի թափօրը կանգ առաւ բազմաթիւ զիւղերու եւ քաղաքներու մէջ, ուր յաղթանակի կամարներ, ողջուններ կրող պատուներ, լիբանանեան դրօշներ եւ իր դիմանկարները կը պարզարեւին ճամբաներն ու հրապարակները, իսկ ժողովուրդը տոհմիկ պարերով եւ շեփորախումբերով կը դիմաորէր զինք:

ՊԱՂԵՍՏԻՆԵՒԻՍՐԱՅԵԼԵԱՆ ՏԱԳՆԱՊ

ՀԱՄԱՍ ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ ՆՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ ՄԸ ՑՆՅԵՑ ԻՍՐԱՅԵԼԸ. ՆՈՒԱԶԱԳՈՅՆԸ 9 ՉՈՐ, ԱԻԵԼԻ ՔԱՆ 50 ՎԻՐԱԴՈՐ

Պաղեստինցի մը անձնասպանական գործողութիւն կատարեց հիւսիսային Իսրայէլի մէջ, օթոպիւսի մը դէմ, պատճառելով առնուապէս 9 զոհ եւ վիրավորելով աւելի քան 50 ուրիշներ:

Այս գործողութենէն ետք, 19 տարեկան պաղեստինցի մը կրակ բացաւ իսրայէլեան փոխադրականութիւնը վրայ, Արեւելեան Երուսաղէմի մէջ, սպաննելով երկու իսրայէլացիներ: Ապա, ոստիկանութեան հետ բախումի ընթացքին, ոստիկանութիւնը սպաննած է պաղեստինցին: Ֆարսիի պինձեալ թելը՝ «Աքսայի նահատակներու փառահանգներ» ստանձնեց արարքին պատասխանատուութիւնը:

Այս դէպքերուն լոյսին տակ, Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի բանբերը Ռաանան Կիսիս յայտարարեց, որ Թէլ Աւիւ յառաջիկայ օրերուն կայանալիք բանակցութիւնները պաղեստինցիներուն հետ կ'առկախէ եւ կը ջնջէ Այսր յորդանանի մէջ քաղաքներու ծանր վիճակը բարելաւելու ծրագիրը, ինչպէս նաեւ կը վերահաստատէ կրակմարի դրութիւնը:

Անձնասպանական գործողութիւնը կատարուեցաւ Քալքիլի մէջ: Օթոպիւսը լեցուն էր իսրայէլացի քաղաքայիններով եւ պինդորներով, որոնք արձակուրդէն կը վերադառնային Կօրանց: Գործողութենէն



Պայթած օթոպիւսին «մնացորդաց»ը

անմիջապէս ետք, Համասի պինդորական թելը՝ «Ալֆտտիմ Քասսամ» փաղանգը ստանձնեց պատասխանատուութիւնը, յայտարարելով, թէ կը շարունակէ վրէժը լուծել իր դեկավարին՝ Սալահ Շեհատէի սպանութեան, որ տեղի ունեցած էր Կապալի մէջ, օդանաւային յարձակումի մը ընթացքին եւ որ իսլամ էր նաեւ բազմաթիւ անմեղ պաղեստինցիներու կեանքը, քանդելով ամբողջ շէնքերու համալիրը:

Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Գուշ անմիջապէս դատապարտեց արարքը, ըսելով, որ ուղղակի խանգարուած է լսելով դէպքին մանրամասնութիւնները: Ան ըսաւ, որ կարգ մը «մարդասպաններ» կ'ուզեն կասեցնել խաղաղութեան գոր-

ծընթացը: «Կոչ կ'ուղղեմ աշխարհի բոլոր պետութիւններուն՝ ամեն կարելին ընելու, կասեցնելու համար այս ահաբեկիչները», ըսաւ ան:

Երեկուան գործողութիւնը մէկ շաբաթուան ընթացքին երկրորդն է Համասի կողմէ՝ Արեւելեան Երուսաղէմի երրայական համալսարանի պայքարաւն:

Երեկուան գործողութիւնը մէկ շաբաթուան ընթացքին երկրորդն է Համասի կողմէ՝ Արեւելեան Երուսաղէմի երրայական համալսարանի պայքարաւն:

ԼԵՆՈՒՅԻՆ ՂԱՐԱՐԱՂԻ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԷ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Հայաստանի իշխանութիւնները, Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան կողմէ հրապարակուած մամուլի հաղորդագրութեամբ մը, Շաքաթ օր ընդառաջեցին Եւրոպական Միութիւնը՝ Լեռնային Ղարաբաղի նախագահական ընտրութիւններուն նկատմամբ անոր որդեգրած դիրքորոշումին համար: Ուրբաթ, 2 Օգոստոսին, Եւրոպական Միութիւնը յայտարարած էր, թէ չի ճանաչար Լեռնային Ղարաբաղի անկախութիւնը, պիտի չընդունի 11 Օգոստոսին կայանալիք նախագահական ընտրութիւններու արդիւնքները, ինչպէս նաեւ կը զօրակցի Ազրայէլեան տարածքային ամբողջակամութեան:

«Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը մտահոգութիւն կը յայտնէ Լեռնային Ղարաբաղի նախագահական ընտրութիւններու շուրջ Եւրոպական Միութեան կատարած յայտարարութեան համար, մանաւանդ որ մնան յայտարարութիւն մը անպատշաճ է միութեան մը համար, որ քաջալեր կը հանդիսանայ Եւրոպական արժեքներու՝ ժողովրդավարութեան հաստատման համար», կ'ըստի հաղորդագրութեան մէջ:

Հաղորդագրութիւնը կը շեշտէ, թէ Եւրոպական Միութեան անդամ պետութիւններու կողմէ կատարուած յայտարարութիւնը անտեղի է եւ կը բարդացնէ միջազգային միջոգորդներու ԵԱՀԿի Մինսքի խմբի խմբակային աշխատանքը եւ խմբակի նախագահութեան կողմէ հովանաւորող բանակցային գործընթացը:

«1994-էն ի վեր մնան յայտարարութիւններ կը կատարուին տարբեր ընտրութիւններու առիթով, հետեւաբար այս յայտարարութիւնը անակնկալ մը չէր», յայտնեց արտաքին գործոց նախարարութեան բանբեր Չիւնիկ Աղաջանեան: Ան ըսեց, որ Լեռնային Ղարաբաղի բնակչութիւնը ունի իր օրինական ղեկավարութիւնը ընտրելու իրաւունքը, «անկախ արտաքին որեւէ կողմի դրական կամ ժխտական դիրքորոշումէն»: «Հայաստանի Հանրապետութիւնը կ'ողջունէ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին անշեղ կամքը՝ ընտրութիւններու կայացման ընդմէջէն ստեղծելու ժողովրդավարական ընկերութիւն, անկախ այս կամ մոյճանճման քաղաքական շարժառիթներէ մղուած յայտարարութիւններու», յայտարարեց Չիւնիկ Աղաջանեան:

ԹՈՒՐԵԱ

ԱՉԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԸ ՄԱՐՏԱՀՐԱՒԵՐ Կ'ՈՒՂՂԵՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐՈՒ ԳԾՈՎ

Թուրք ազգայնականներ շարժառիթներին սպաննացին իրաւական գետնի վրայ մարտահրաւէր ուղղել մարզկային իրաւանց կապուած բարեկարգումներու ծրագիրի մը, զոր երէկ ողջունած է վարչապետ Պիլչէլիթ Էնեւիթ իրրեւ բանալի քաջ մը դէպի Եւրոպական Միութեան անդամակցութիւն:

Խորհրդարանը Շաքաթ օր քուէարկած էր ի նպաստ բարեկարգումներու ծրագիրին, որուն ծիրէն ներս կ'իյնայ խաղաղ ժամանակաշրջանի մահափճիւրը ջնջել, քրտեքէնի դէմ սահմանափակումները մեղմացնել եւ վերջ տալ պատժամիջոցներու՝ զինեալ ուժերու եւ քաղաքական հաստատութիւններու քննադատութեանց համար:

Ե. Միութիւնը ողջունած է քաջը, իրրեւ ցուցանիչ մը, թէ Թուրքիոյ ղեկավարներուն մեծամասնութիւնը կ'ուզէ որդեգրել Միութեան արժեքներն ու շահեկանները, սակայն անիկա ըսած է, որ ծրագիրը «պէտք է ուղղորդուի վերլուծուելի, անոր ազդեցութիւնը լիովին գնահատելու համար»:

Թուրքիոյ փոխ վարչապետ Տեւլէթ Պահչէլի երէկ յայտնած է, թէ երկրին գերագոյն ատեանին պիտի դիմէ բարեկարգումներուն գծով:

ՀԻՒՄԵՅՆ ՀԻՒՄԵՅՆԻ ԽՍՏԻ ԿԸ ՔՆՆԱԳԱՍԵ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻՆ ԿԸ ՆԿԱՍԵ ԱՐԳԵԼՔ՝ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԵՐԹԻՆ

Խորհրդարանի նախկին նախագահ Հիւսէյն Հիւսէյնի սաստկացուց վարչապետ Ռաֆիք Հաւրիբի դէմ իր ոճը եւ Շաբաթ օր հաւաստեց, որ Հարիբի խոչընդոտ մը դարձած է Երկրի փրկութեան երթին համար:

«Իսկապէս ցաւալի է, որ նախարարաց խորհուրդի վերջին նիստին երեւան եկաւ, որ վարչապետը փաստօրէն բոլոր նախարարութիւններու եւ պետական վարչութիւններու ուղղակի տնօրէնը դարձած է, իսկ նախարարներու մեծամասնութիւնը սուտ վկայ է միայն», ըսաւ Հիւսէյնի:

Ան դիտել տուաւ, որ «նախարարաց խորհուրդի յիշեալ նիստը վաւերացուց այսպէս կոչուած բռնադատի հեռաձայնի հարցի միջին լուծումը, որ յօրինած ու բեմականացուցած էր նոյնինքն վարչապետը, իսկ միջին լուծում կոչուածը անընդունելի է բոլոր սահմանադրական եւ օրինական չափանիշներով, երբ կը վերաբերի

Շաբ.ը՝ էջ 10

ՄԱՀԱԶԴ

- Տիկին Աստղիկ Ապունայեան
- Տէր եւ տիկին Յարութեալ եւ Միլվա Գուլբուրեան
- Տէր եւ տիկին Սարգիս եւ Սինթիա Մենտիլեան
- Տէր եւ տիկին Մկրտիչ եւ Սարբի Գուլբուրեան
- Տէր եւ տիկին Րաֆիք եւ Սապին Թիւֆէնքեան
- Տիկին Մարի Ապունայեան եւ զաւակունք
- Տիկին Ժաքելին Ապունայեան եւ զաւակունք
- Օրդ. Նազելի եւ Մարիէթ Այնէճեան
- Ապունայեան ընտանիք
- Խանճեան ընտանիք
- Գասպեան ընտանիք
- Պաղտասարեան ընտանիք
- Պասմանեան ընտանիք
- Արաւանեան ընտանիք
- Քէօրճիկեան ընտանիք
- Գուլբուրեան ընտանիք
- Մենտիլեան ընտանիք
- Գուլբուրեան ընտանիք
- Թիւֆէնքեան ընտանիք
- եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, աներոջ եւ հարազատին՝

ԹՈՐՈՍ ԱՊՈՒՆԱՅԵԱՆԻ (Ծնեալ 1935ին)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 4 Օգոստոս 2002ի առաւօտեան ժամը 8:00ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի յայտ՝ Երկուշաբթի, 5 Օգոստոս կէսօրէ ետք ժամը 2:00ին, Հայ կաթողիկէ Ս. Նիխ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Հայ կաթողիկէ գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Անթիլիաս, Թաշճեան շէնք, 3րդ յարկ:

ՄԱՀԱԶԴ

- Տիկին Շաքէ Սրապեան եւ զաւակները՝ Տիգրան, Վիգէն եւ Մակի
- Տիկին Մարի Օհանեան Սողոմոն ընտանիք
- Յովհաննէս ընտանիք
- Սուրէն ընտանիք
- Տիկին Անժէլ եւ զուտորը
- Տէր եւ տիկին Մաթ եւ Մարիանա Հալան - Ասմինեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Անդրանիկ եւ Օսաննա Աւետիսեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Սահակ եւ Սեդա Համբարձումեան եւ զաւակունք
- Տիկին Գլխուհի Համայեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Ժանիկ Գալանեան եւ զաւակունք
- եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, քեռայրին, քենեկալին եւ հարազատին՝

ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍ ՍՐԱՊԵԱՆԻ (ԱՊՈՒ ՏԻԳՕ) (Ծնեալ՝ 1932ին)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 1 Օգոստոս 2002, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Պէյրութի Ամբրիկեան հիւանդանոցին մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երկուշաբթի, 5 Օգոստոս, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատան ընտանեկան դամբարանին մէջ:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Մար Միայել, «Փիլիկեան շէնք», Երեքշաբթի 6, Չորեքշաբթի 7 եւ Հինգշաբթի 8 Օգոստոսին:

ԴԵՍՊԱՆ ՊԵԹԸԼ ՆԵՐԿԱՅ ԳՏՆՈՒԵՑԱԻ ՍՖԵՅՐԻ ՄԱՏՈՒՑԱԾ ՊԱՏԱՐԱԳԻՆ, ԱՊԱ ԺՈՂՈՎ ՍԸ ԳՈՒՄԱՐԵՑ ԱՆՈՐ ԸՆՏ

Մարոնիներու պատրիարքը երեկուան իր քարոզչի մէջ հարց տուաւ, որ ինչպէ՞ս կարելի է բացատրութիւն գտնել այնքան շարժառթոնած ահաւոր ոճիրին, որուն գծով բազմաթիւ հարցումներ կան:

«Այդ ոճիրին պոհ զացին ութ հոգի եւ վիրաւորուեցան հինգ անձեր. ոճիրին շուրջ ծագած հարցականները կը վերաբերին սեփական վարժարաններու յիսուն հազար ուսուցիչի հատուցումներուն, որոնք կը սպասուին ա՛յս ստուովէն, որուն ունեցուածքը 215 միլիարդ լիւր. ունի կը հասնի, իսկ տարեկան պիտուէ՛ն՝ 64 միլիարդ, այս բոլոր հատուցումներուն ու գումարներուն իրաւատէրներուն փաստերը կը գտնուին համակարգիչի մը մէջ, զոր իսնագարած են փաճփուշտները», ըսաւ ան:

Սֆէյր պատրիարքը իր քարոզչը սկսած էր բարի գալուստ մաղթելով պատարագին ներկայ գտնուած Միացեալ Նահանգներու դեսպան Վինսենթ Պէթրիլի եւ անոր ներկայութեան համար գոհունակութիւն յայտնելով ինքրած էր միասին աղօթել աշխարհին, շրջանին եւ Լիբանանի մէջ խաղաղութեան հաստատումին համար, որովհետեւ անիկա մեծագոյն պարգէն է մարդկութեան:

Պէթրիլ մէկ ժամ տեւողութեամբ ժողով մը գումարեց Սֆէյր պատրիարքի հետ, ապա կատարեց յայտարարութիւն մը, որուն մէջ հաւաստեց, որ Ուաշինկթըն լուրջ աշխատանք կը տանի շրջանին մէջ խաղաղութեան հաստատումին համար եւ լիբանանեան կառավարութիւնը հիմնական մասնակից է այս ճիգին:

Լիբանանի ներքին հարցերուն մասին Պէթրիլ ըսաւ, որ Միացեալ Նահանգներ կը սպասեն քաղաքական եւ տնտեսական ոլորտներէն ներս յաւաքողութիւններ, որ կը նպաստէ բոլոր լիբանանացիներուն:

«Սֆէյր պատրիարքին առաքելութիւնը ազգային է եւ ոչ համայնքային», ըսաւ ան:

ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԸ ՄԱՐՏԱՀՐԱՒԵՐ ԿՈՒՂՂԵՆ...

Ծարուակուած Ա. Էջն

Անոր Ազգայնական Գործի Կուսակցութիւնը միակն էր, որ ընդգծեց իր ծրագրերը: Ազգայնականները ունին այն մտաւախութիւնը, թէ միջոցառումները պիտի վերահասարակեան հարաւարեւելեան գոտիին մէջ անջատողականութիւնը:

Պահելի ըսած է, որ սահմանադրական ատենանի պիտի դիմէ, յատկապէս ինչ կը վերաբերի մահապատիւ ջնջումին եւ քրտերէնի հարցին:

Իսկ Էճնի իր յայտնած է, որ բարեկարգումները պիտի լրացնեն Ե. Միութեան անդամակցութեան համար անհրաժեշտ չափանիշները: «Այսօրու իսկ սկսեալ, Թուրքիա աւելի ազատ, աւելի ժողովրդավար եւ աւելի երդպական պիտի դառնայ», շեշտած է ան:

Վարչապետը յայտնած է նաեւ, թէ մտահոգ չէ ազգայնականներու հաւանական քայլերով:

Բարեկարգութիւններու ծրագիրը մղուած էր խորհրդարանին մէջ արագօրէն վաւերացուելու համար՝ Ե. Միութեան անդամակցութեան ի նպաստ կողմնորոշուած ուժերու կողմէ, որոնք կ'ուզեն, որ բարեկարգութիւններու հարցը աւարտուի:

ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԵՐԸ ԲԱՆԱԿՑՈՒԹԵԱՆՑ ԹՈՒԿԱՆ ՊԻՏԻ ԶԱՊԱՆՈՎԵՆ

ԿԸՍԵՆ Ե. ՄԻՈՒԹԵԱՆ
ԲԱՐՉՐԱՍՏԻՃԱՆ
ՊԱՇՏՏԱՍԱՐՆԵՐ

Դիւանագէտներ եւ Ե. Միութեան բարձրաստիճան պաշտօնատարներ կ'ըսեն, որ Թուրքիոյ կողմէ մարդկային իրաւանց բարեկարգումներու որդեգրումը բաւարար չէ, որ անիկա իրենց այնքան փափաքելի թուականը ապահովէ՝ անդամակցութեան համար բանակցութեանց միտելու նպատակով:

Անոնք կը յայտնեն, որ

ԾՆՈՐԿԱԿԱԼԻՔ

● Թեճիքեան, Չամիչեան, Տր խորհրդանուն եւ Արգունեան ընտանիքներ շնորհակալութիւն կը յայտնեն, բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, հեռագիրով եւ նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց մօր, մեծ մօր եւ զոքանչին՝ ԼՈՒՍԻՆ ԹԵՃԻՐԵԱՆԻ մահուան սուգին:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Տիգրանուհի Նազարեան
Տէր եւ տիկին Վարդիվա Օհանեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Գրիգոր Սարգիսեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Ժողէֆ Օհանեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Արշակ Աննայեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Րաֆիք Մերտիսեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Յակոբ Նազարեան եւ զաւակունք
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, աներոջ, հորեղբոր եւ հարազատին՝

ՆԱԶԱՐԵԹ ՆԱԶԱՐԵԱՆԻ (Ծնեալ՝ 1932ին)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 4 Օգոստոս 2002ին, յետ սրտի կաթոնածի:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երկուշաբթի, 5 Օգոստոս, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Տրաք, Տրաք, Մար Մարուն եկեղեցւոյ թաղ, Երկուշաբթի 5, Երեքշաբթի 6 եւ Չորեքշաբթի 7 Օգոստոսին:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ԻՍՐԱԵՆԻՆ օդուժը երէկ Լիբանանի օդային սահմանները ճեղքելով թռիչքներ կատարեց հարաւել վերեւ:

Դիմադրութիւնը յայտարարեց, որ իր ուժերը ժամը 11:20ին կրակ բացած են թշնամի օդանաւերուն վրայ:

ԱՅՆ ԷՆ ՀԸԼՈՒԵ Գաղթականացի մէջ երեկ առաւօտ ական մը պայթեցաւ բազմաբեղէնի շուկայի մուտքին:

Ասիկա վերջին երեք օրերուն ընթացքին գաղթականացիներու կողմէ բերուող երրորդ ականահատումն է:

● ԸՆԿԵՐՎԱՐ Յառաջդիմական Կուսակցութեան նախագահ երեսփոխան Ուալիտ Ժոմայլաթ յիշեցուց, որ տարի մը առաջ մարոնիներու Սֆէյր պատրիարքը այցելեց Լեռնալիբանան եւ Մուխթարա ու միասին հիմնադրեց ազգային մեծ հաշտութեան, որ պէտք է ընդգրկէ Աքքարէն միջնեւ հարաւ բոլոր շրջանները: Ժիշդ է, որ տարակարծութիւններ կան, բայց անոնք պիտի մնան ժողովրդավարական երկխօսութեան ընդունելի ճիւղին ներս, եւ բոլորս պէտք է վանենք բոլոր ծայրայեղական գիծերը, ըսաւ ան:

● ԵՆՈՒՆԵՍԿՕԻ ռեփրիմ քաղաքացի Արդարադատութեան խորհուրդին վստահելու նախարար խորհուրդին որոշումին լոյսին տակ կը սպասուի, որ այս շաբաթակիցին նշանակուի այս հարցին համար խորհուրդին կողմէ յատուկ քննիչ դատախազ մը, արդարութեան նախարար Սամիր ժաբրի եւ խորհուրդի նախագահ Նասրի Լահուտի խորհրդակցութիւններուն հիմամբ:

● ԵՐԵՍՓՈՒՆ Ալի Ռալիլ երէկ սգահանդէսի մը ընթացքին արտասանեց Ամալ շարժումի խօսքը, եւ դատապարտեց ԵՆՈՒՆԵՍԿՕԻ ռեփրիմը, ընդգծելով, որ այս հանգուցեալին անհրաժեշտ է կեդրոնանալ ազգային միասնութեան ամրապնդումին վրայ եւ թոյլ չտալ, որ անհատական դէպքեր շահագործուին հանրային կարծիքի կիրքերը բորբոքելու համար, այլ պահպանել կայունութիւնն ու քաղաքացիական խաղաղութիւնը:

Ան կոչ ուղղեց լրատուական միջոցներուն՝ տարբեր տարողութիւն չտալու այդ ռեփրիմ, որովհետեւ ամբողջ Լիբանանը անոր դէմ է:

● ԵՐԵՍՓՈՒՆ Ալուպ Հըմայէտ երեկ դիտել տուաւ, որ ԵՆՈՒՆԵՍԿՕԻ մէջ գործուած ռեփրիմ մէկ համայնքի դէմ գործուած իբրեւ ռեփրիմ Երկաշաղկապելու փորձերուն միակ նպատակը լիբանանցիներուն միջեւ սեպ խրելն ու զանոնք պատակտելն է, եւ այս ընթացքը նպատակաւոր չէ, ո՛չ հայրենիքին, ո՛չ ալ քաղաքացիներուն:

ՇԱՐՉ՝ ԷՅ 10

<p>ՆՇԱՆՈՒԿ</p> <p>ՍԱԲԻ ԼԱՏՅԵԱՆ</p> <p>ընդ ԸԱՅԿ</p> <p>ԹՈՔԱԹԵԱՆ</p> <p>Պէյրուք, Կիրակի, 4 Օգոստոս 2002</p>	<p>ՏՈՔԹ. ՈԱԶՄԻԿ ՈՍԿԵՐԻՉԵԱՆ</p> <p>ԵՎ ՏՈՔԹ. ՎԻԿԱ ԷՆ ԸԱՔԻՍ</p> <p>ԽՕՍԵՅԵԱԼՔ</p> <p>3 Օգոստոս 2002 Պէյրուք</p>
---	--

ՎԱՐՉՈՒ ԳՈՐԾԱՏԵՂԻ

● Տորալի օրոքարատի վրայ, 600 քառ. մէթր, Ա. յարկ: Կեռ.: 03 / 325053:

ՎԱՐՉՈՒ ՏՈՒՆ

● Ամանոս, 2 սենեակ, հիւրանոց: Կետաքրքրուողներ կրնան հեռաձայնել 01 / 262245, 04 / 406452 թիւերուն:

ՎԱՐՉՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

● Պուրճ Համուտ, Կիլիկիա թաղ, Ա. յարկ՝ 3 սենեակ եւ 2րդ յարկ՝ 3 սենեակ: Դիմել՝ հեռ. 01-740668:

ՎԱՐՉՈՒ ՎԵՐՄԵՆԻ

Ս. Պակի խորհուրդին, որ տեղի պիտի ունենայ, Երկուշաբթի, 19 Օգոստոս 2002, կէսօրէ ետք ժամը 4:00ին, Ս. Հոփիսիմէ տաճարին մէջ, Էջմիածին:

Կնքահայր՝ ՊՐՆ. ՃՈՐՃ ԹՈՐՈՍԵԱՆ

Կնքամայր՝ ՕՐԳ. ՍՕՍԷ ԹՆՃՈՒԿԵԱՆ

● Ներկայս ընդունիլ իբրեւ անձնական հրաւեր:

● Ընդունելութիւն՝ 1 Հոկտեմբեր 2002էն ետք, ժամադրութեամբ՝ հեռ. 03 - 321259 եւ 01 - 480210:

ՎԱՐՉՈՒ ԿԱՐՏԱՆԻՍ

Հայկական Երգերու Փառանք

ԵՆՈՒՆԵՍԿՕԻ

ԵՆՈՒՆԵՍԿՕԻ ՄԱՐՏԱՀՐԱՒԵՆ - ՍՈՒԿ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ - ՎԻՃԵՆ ՏՈՔԵՐԵՆԵԱՆ - ՀՐԱՅ ԳՆՏՈՒԿԵԱՆ - ՄԱՆՈՒԿ ՄԻՆԵՍԵԱՆ - ԿՈՐՈ ՎԵՐՄԵՆԵԱՆ - ՄՐԱՍԱ ԱՎՈՐՆԵԱՆ - ԳՕԳՕ ԿԸՕՇԵՐԵԱՆ:

ՄՕՍԵՅԱՆՈՒԹԵԱՆՔ

ՍԵԳՕ ՊԱՇՏԱՍԱՐՆԵՐԻ

ՏԵՂԻ ԿՈՒՆԵՍԿՕՒՆԵՐ ԹՐԱՔԸ 9 ՕԳՈՍՏՈՍ 2002ԻՆ, ԵՐԵՎԱՆԻՆ ԺԱՄԸ 8:00ԻՆ, ՅՈՎՀԵՆԵՍ ԳՕՂՈՍԵԱՆ ՀԱՅԳԻՍՏԱՐԱՊԵՏԻ ՄԵՋ, ԳՈՐԾ ԿՍՏՈՒՆ:

Մակ՝ 5000 Լ.Պ.

ՀԱՄԱՀԱՄԱԿԱՆ Է. ԲԱՆԱԿՈՒՄԻ ՊԱՇՏՏՈՆԱԿԱՆ ՓԱԿՈՒՄ

Երեկ, Կիրակի 4 Օգոստոսին, իր աւարտին հասաւ 27 Յուլիսին Հ.Մ.Ը.Մ.Հ.Ա.Ս.Կ.Ի Բիրականի բանակաւայրին մէջ սկսած Համահ.Մ.Ը.Մ.ական Է. բանակումը:

Աշխարհասփիւռ պանապան մասնաճիւղերէ Հայաստանի մէջ համախմբուած շուրջ 550 Հ.Մ.Ը.Մ.ական սկաւտներ, որոնք 9 օրերէ ի վեր միասնաբար կը բանակէին հայրենիքին երկնքին տակ, երէկ գիշեր վարտին դրօշակի ձողը եւ մեծ խարուկահանրէի մը շուրջ տեղի-պոռնայով փակեցին Համահ.Մ.Ը.Մ.ական Է. բանակումը՝ ընկերային ջերմ մթնոլորտի մէջ: Տեղի ունեցաւ նաեւ յուշանութներու փոխանակում:

Շարքաթ, առաւօտեան ժամը 10:30ին, բանակող սկաւտներ

ըր լման տարակող մեկնեցան Օրծոնակաբերդ եւ ծաղիկներ պետեղեցին յուշակոթողին անմար կրակին շուրջ: Ապա հմբապետական կապը այցելեց Եռաբլուր եւ ծաղկեպսակներ դրաւ Վարդան Բաշինեանի, Վիգէն Չաքարեանի եւ Վաչագէն Սարգսեանի շիրմներուն:

Յետմիջօրէին Հ.Մ.Ը.Մ.ի 550 սկաւտները հանդիսարարու տպաւորիչ կերպով տողանցեցին Երեւանի փողոցներուն մէջ՝ մշակոյթի նախարարութեան շէնքէն մինչեւ հանրապետութեան հրապարակ, ուր հնչեցուցին «Մեր Հայրենիք», «Յառաջ Նահատակ» եւ «Ով Հայ Արի» քայլերգները: Տողանցքը տեղի ունեցաւ մեծ շուրջով, հապարաւոր քաղաքացիներ հա-



Լարուած էին՝ տողանցքին ներկայ գտնուելու եւ դիտելու Հ.Մ.Ը.Մ.ականներու կշռութաւոր տողանցքը:

Այսօր, բանակողները կը մեկնին Արցախ եւ կը շարունակեն հայրենի տեսարժան վայրեր իրենց այցելութիւնները: Անոնք

Չորեքշաբթի օր կը վերադառնան Երեւան, իսկ Լիբանանի փառանքը Հինգշաբթի գիշեր կը վերադառնայ Պէյրութ:

ԻՍԱՄ ՖԱՐԷՍ ՄՐՑԱՆԱԿԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ՝ ԱՅՆՃԱՐԻ ՄԷՉ

Ամէն փարի փոխ վարչապետ Իսամ Ֆարէսի անուան հասարակական կարգաւորումները մրցանակներ կը շնորհէ Լիբանանի հնոթիւններուն մասին յաւանքուն ուսումնասիրութիւնները կատարած ուսանողներուն: Այս փարւան ուսումնասիրութեան թեման Այնճարն էր: Այնճարի յարմարութեան եւ ճանաչարարութեան քառաբն աներակներուն մասին ուսումնասիրութիւնները կատարած էին Լիբանանեան, Քասիթի եւ արաբական համալսարաններէն մեծ թիւով աշակերտներ, որոնցմէ երբեք սպացան առաջին, երկրորդ եւ երրորդ կարգի մրցանակները, իսկ երկու ութիներ արժանացան դարական կազմին զնահափարակներ:

Մրցանակաբաշխութեան հանդիսութիւնը փեղի ունեցաւ Շարքաթ, 3 Օգոստոս 2002, առաւօտեան ժամը 11:00ին Այնճարի Ս. Պողոս եկեղեցոյ «Փալուսար

Կիւլդեկեան» սրահին մէջ: Հանդիսութեան ներկայ էին Իսամ Ֆարէսի ներկայացուցիչ «Իսամ Ֆարէս» հասարակութեան ընդհանուր փնօրէն ղեկավար Փոլ Սալէմ, երեսփոխաններ Ասէմ Բանաս, Ղազի Չաէթըր, Սամի Մարիոյ, Բողլըր Դանէմ, Հ. Յ. Գ. Կեղրոնական Կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Յովիկ Մխիթարեան, Լիբանանեան համալսարանի յարմարութեան բաժանմունքի փնօրէնի ներկայացուցիչը, գնդապետ Փանոս Մանճեան, Այնճարի քաղաքապետ Սեդուի Սգայեան, Պորճ Տամուպի քաղաքապետ Անդրանիկ Մարրիւեան, Պեքաւի շրջանի քաղաքապետներ եւ քաղաքապետներ, Այնճարի հոգեւոր հովիւներ եւ շուրջ 500 ներկայներ:

Ձեռնարկը կազմակերպուած էր «Ֆոլքլոր Պէյրութ»



ընկերակցութեան կողմէ, որ հակառակ իր անուանումին համալիբանանեան միութիւն մըն է, որ կը կազմակերպէ լիբանանեան ֆոլքլորը քաղաքապետը եւ մշակութային կեդրոնը ընկ. Սալէմ Սալէմը: Այնճարի յարմարութեան փնօրէնի ներկայացուցիչը, գնդապետ Փանոս Մանճեան, Այնճարի քաղաքապետ Սեդուի Սգայեան, Պորճ Տամուպի քաղաքապետ Անդրանիկ Մարրիւեան, Պեքաւի շրջանի քաղաքապետներ եւ քաղաքապետներ, Այնճարի հոգեւոր հովիւներ եւ շուրջ 500 ներկայներ:

Կիրակոս Քիլճեանը, որ փոխանցէ Այնճարի քաղաքապետութեան խօսքը: Կ. Քիլճեան անդրադարձաւ Այնճարի յարմարութեան մշակութային կեդրոնը ընկ. Սալէմ Սալէմը, որ իր փեղի մէջ առաջինը յիշատակեց իր փոխանցելու համար: Այս քան իրաւորութեան «Իսամ Ֆարէս» հասարակութեան ընդհանուր փնօրէն ղեկավար Փոլ Սալէմը իր խօսքը փոխանցելու համար: Դուրս, Սալէմ փոխանցելէ ետք փոխ վարչապետ Իսամ Ֆարէսը ողջունեց ներկայներուն, խօսեցաւ «Ֆոլքլոր Պէյրութ» ընկերակցութեան համայնագիտարան հրապարակելու կարեւորութեան մասին եւ շնորհաւորեց մրցանակակիրները իրենց աշխատանքներուն եւ նշեց ընդ որ համայնակարգի մասին եւ իստեղծութիւններուն համայնաբերդ այսօրիսի աշխատանքներուն եւ նախաձեռնութիւններուն կատարողները: Ան նաեւ շնորհակալութիւն յայտնեց «Իսամ Ֆարէս» հասարակութեան, Այնճարի քաղաքապետութեան եւ ընդ որ անոնց, որոնք նուազապարտաւորութեան համար (Լիբ. համալսարանէն) մէկ միլիոն լիբ. ոսկի: Դարական կազմի յարմարութեան

հարմարութեան արժանացան երկու ուսանողներ (երկուքն ալ Լիբանանեան դեպարտմենտի), իրաքահայրը սպանաւորով 500 հազար լիբ. ոսկի. անոնք են Լէյլա Ալ-Քալա եւ Նըսրին Մարաբա:

Մրցանակաբաշխութեան արժանացան Լիբանանի քաղաքապետ Սեդուի Սգայեան, իր կարգին, յուշանութներ յանձնեց «Իսամ Ֆարէս» հասարակութեան ընդհանուր փնօրէն ղեկավար Փոլ Սալէմին եւ «Ֆոլքլոր Պէյրութ» ընկերակցութեան նախագահուհի Սահմա Մարաբային, որ փոխանցեց իր սրբի խօսքը: Նշելով կարեւորութեան լիբանանեան ֆոլքլորին եւ Լիբանանի քաղաքապետութեան շուրջ համալսարանական մակարդակի տուրք հրապարակութիւններուն անհրաժեշտութիւնը, Ն. Մարաբայ անդրադարձաւ Այնճարի յարմարութեան եւ մշակութային հարմարութեան մասին եւ շնորհակալեց իր կարգին շնորհակալութիւնները 2003ի մրցանակները: «Տարածունի հնոթիւններու յարմարութեան ղեկավարը»:

Ձեռնարկէն ետք փեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Տեղական մամուլը 3 Օգոստոսին գլխաւորաբար լուսարձակի տակ առած է լիբանանեան քաղաքական լարուած կեանքը յուլոյդ հարցերը եւ իսրայէլեան բռնարարները:

«Նահար» գրած է, «Տեղեկատուական մարկը ծանր սպառնալիք մը ստացաւ. ԵՌԻՆԵՍ-ՔՕԻ ռճրին համայնքային գունաւորում տալու փորձերուն անդրադառնալով, նախարար Արիտի ըսաւ. - նախարարաց խորհուրդը բաւական մտեցաւ բոլոր կայաններու փակման որոշում տալու»:

«Տիար» նշած է, թէ պատասխանատու անձնաւորութեան մը համաձայն, այսուհետեւ տնտեսական հարցերու լուծման միակ առանցքը վարչապետ Հարիրի պիտի չըլլայ, այլ՝ նախարարաց խորհուրդը իր լրի կազմով: «Տեղեկատուական մարկի կացութիւնը կը մտահոգէ պետութիւնը եւ նախարար Արիտի կը խօսի գործնական քայլերու հաւանականութեան մասին», ըսած է թերթը:

«Մնուար»-ի համաձայն, Հիւսէյն Հիւսէյնի եւ Օմար Քարամէ կը յայտարարեն. «Քիշթայինի հարցով եղած կարգադրութեան պատճառով միլիտար տղայներ մնացին երկու ընկերութիւններուն մօտ»: Թերթը գրած է, թէ նախարար Քըրտահի կը պատրաստուի քիշթային ընկերութիւններուն հետ բանակցութեան. «Սեյիս» ընկերութիւնը կը մերժէ պետութեան հաշուին աշխատիլ:

Ըստ «Մաֆի»-ի, Քըրտահի կը պատրաստուի գործադրելու քիշթայինի հարցով տրուած որոշումը: Քաղաքական մակընթացութիւն՝ տեղեկատուական մարկին շուրջ:

«Լիուս» գրած է, «Տեղեկատուութիւնը մակընթացութեան նոր մարկ մըն է, իսկ քիշթայինը գործադրութեան սեմին հասաւ. Արիտի լսողական եւ տեսողական կայաններուն ըսաւ. «Կարմիր գիծերը կը գրգռեն լարուածութիւնը, տնտեսութիւնը եւ Լիբանանի յարաբերութիւնները»:

Պաղեստինեան հարցին եւ իսրայէլեան բռնարարներուն մասին «Մուքաբաթալ» գրած է. «Նապոլու քաղաքը իրասպլլերով գրաւուեցաւ. 6 նահատակներ, տասնեակներով վիրաւորներ եւ հարիւրաւոր ձեռքակալուածներ»: Ըստ «Մնուար»-ի, Համաս կազմակերպութեան ղեկավարներն Ռանթիսի կ'ըսէ. «Եթէ հարապատ պաւակ փախաքի անձնասպանական գործողութեան մը դիմել, անոր արգելք չեն հանդիսանար»:

«Քիֆահ Արապի»-ի համաձայն, Եսաէր Արաֆաթի հետ խաղաղութեան նպէլեան մրցանակ ստացած Շիմոն Փերէս կ'ըսէ. - կը փախաքի, որ Արաֆաթ ահաբեկուի, սակայն ո՛չ իսրայէլեան գնդակով:

«Լիուս» նշած է, թէ պաղեստինեան պատերազմութեան Ռաշինկոյն կատարելիք այցելութիւնը յետաձգուեցաւ: Նապոլուի գրաման հետեւանքով՝ 5 նահատակներ, տուններու մէջ տեղի ունեցած պայթումներ եւ երկու եղբայրներու աքսորում դէպի Կապա:

Միջապգային իրադարձութիւններուն մասին «Քիֆահ Արապի» նշած է, թէ աներկեան յարձակումին իբրեւ հակադարձութիւն՝ Իրաք պատրաստած է արաբական կարգ մը երկիրներ հարածելու ծրագիր մը, ըստ այս ծրագրին, աներկեան յարձակումէն անմիջապէս ետք, իրաքեան իրթիւններ պիտի հարուածեն Յորդանանի, Բուէյթի, Պահրէյնի եւ Բարաքի ղեկավարներուն ապարանքները, եթէ այդ երկիրներու մեղակցութիւնը հաստատուի:

«Նահար» գրած է, թէ Ռուսիա կը յայտարարէ, թէ հիւլէական մարկին մէջ Իրանի հետ գործակցութիւնը կախեալ է քաղաքական ազդակներէ: Թուրքիոյ խորհրդարանը շնչեց մահապատիժի դրութիւնը. այս որոշման հիմամբ՝ Ապտիլլա Օճալանի դէմ արձակուած մահուան վճիռը չէղեալ կը նկատուի:

«Մուքաբաթալ»-ի համաձայն, Իրաք պատրաստակամութիւն կը յայտնէ ՄԱԿի քննիչները ընդունելու, բայց ձորճ Պուշ անհրաժեշտ չի տեսներ, որ քննիչներու հարցով Իրաքի հետ բանակցութիւններ ըլլան. ՄԱԿի Ապտիլլա թեան խորհուրդը յառաջիկայ շաբաթ պիտի քննէ Իրաքի նոր առաջարկը:

Տեղական գետնի վրայ տեղի ունեցած իրադարձութիւններուն մասին խօսելով «Մուքաբաթալ» գրած է, թէ Ֆուատ Սիմիտը կը հերքէ, որ Սայտայի երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն թեկնածու պիտի ներկայանայ:

Թերթերը նաեւ լուսարձակի տակ առած են ԵՌԻՆԵՍՔՕԻ մէջ պատահած ողբերգութիւնը, այդ առնչութեամբ կատարուած վերջին իրադարձութիւնները, պանապան կողմերու, մարմիններու կեցուածքներն ու դատապարտումները, ըստ որոնց՝ պէտք է խստի դատապարտել եւ պատժել ռճրագործը, որպէսզի երկրին մէջ անախորձ մթնոլորտ չտիրէ եւ դէպքերն ու կասկածները չշարունակուին:

Մշակութային էջով թերթերը անդրադարձած են Լիբանանի փառապան շրջաններուն մէջ տեղի ունեցող փառասօսներուն: Ըստ թերթերուն, փառասօսները եւ ամանակայ յատուկ ծրագիրներ սկսան Սուրի, Ալեյի, Չուբի, Տըհուի Շուէյրի եւ Թըհիփոլիի մէջ:

Լիբանանեան մամուլը տեղ տուած է լիբանանեան արտադրութիւններու մնայուն ցուցահանդէսի բացումին, որ տեղի ունեցած է 2 Օգոստոսին Պէյրութի նաւահանգիստին մէջ: Ըստ թերթերուն, այս մէկը առիթ մըն է լիբանանեան մարկի պարգագման եւ բարգաւաճման ճարտար արհեստի:

ԱՉԳ. «ՅԱՆԱՉ-Գ. ԿԻՒ ՊԵՆԿԵԱՆ»
ԵՐԿՐԳ. ՎԱՐԺԱՐԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ԿԱՐԻՔ
 Ազգ. «Յառաջ - Գ. Կիւլդեկեան» երկրորդ վարժարանը կարիք ունի փոխառն տնօրէնի մը: Փափաքողները իրենց դիմումները կրնան ներկայացնել վարժարանի խնամակալութեան: Հեռ. 08-620616 Fax: 08-620614

ՇՐՋԱՊՏՈՅ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿՐ ԴՐԱՆՏԱԿԱՅԻՐ

- Օգոստոս 9-16 Հայաստան լման պտղոյններով՝ 650 \$
- Օգոստոս 9-23 Հայաստան լման պտղոյններով՝ 825 \$
- Օգոստոս 23 - Սեպտեմբեր 6 Հայաստան, Ա. կարգի հիւրանոց եւ բացառիկ յայտագիր, Ջերմուկ, Սեւան, Ծաղկաձոր, Դիլիջան, պարահանդես. զին՝ 850 \$, իսկ թռիչքները Հայէպէն, բոլոր գիծերու վրայ 75 \$ նուազ + օդակայանի տուրքը ձրի:
- Սեկ շաբաթ Կառնա 285 \$, մէկ շաբաթ Եալթա 540 \$, մէկ շաբաթ յունական կղզիներ Calypso նուով անէն գիշեր խրախմածը լման ձաշերով, զին՝ 450 \$
- Ամէն Ուրբաթ 3 օր Լաքաթիա, հինգ աստղանի պանդոկ 85 \$
- Ամէն Կիրակի Դամակոս - Սեւոնայա 13 \$
- Կիպրոս երթուղարձ արթազ նուով 65 \$
- Ս. Աստուածածնայ տօնին առիթով ետօրայ շրջապտոյտ - ուխտագնացութիւն դէպի Պանիաս, Լաքաթիա, Բեսապ, պտղոյններ 69 \$, մեկնում 16 Օգոստոս:

ԱճճՆԱՆ ԹՈՒՐԳ 01-261177, 01-240654 եւ 03-233978:

ՀԱՇՈՒՎՊԱՀԱԿԱՆ ՇԱՐԱԴՐԱՆՔ ԿԱՄ «ԱՐԴԻԱԿԱՆ ՊԵՐՃՈՒԿԻՉՄ»

Հաշուապահությունն ալ վերածուած է ուրիշ բանի: Յարդ ան կը սահմանուէր իրրեւ գիտութիւն՝ հիմնուած առարկայական տուեալներու վրայ: Ստացագիրներ, հաշուեցոյցներ, դրամատնային կտրօններ: Ասոնցմէ ծնունդ կ'առնեն տոմարներ, որոնցմէ կը յառաջանան հաշուեթիւններ կը կատարուին եւայլն, եւայլն:

Հաշուեթիւնները, ընդհանրապէս, վախ ազդող, գոնէ պատկառանքները չեն արարածներ կ'ըլլան: Տոմարակալներ եւ հաշուապահներ ահով ու դողով կը կանգնին հաշուեթիւններու գիմաց:

Հաշուեթիւնները, ինքնին, վերածուած է առանձին «պիլգետ»ի: Հաշուեթիւնական հսկայ ընկերութիւններ ձեւով մը վերածուած են սպառողական «իքրուիզաթրոներու» հաւատարմութիւններու, որոնք կոչուած են, կամ էին, հսկելու նիւթական գործառնութեանց ուղիղ կիրարկումին վրայ:

Մարդիկ, որոնք այլեւս կենքի նպատակի վերածած էին հաւատարմութեան ստակալին: Փոխան վանքի՝ պանք, փոխան Աստուծոյ՝ տղարայս էր, եւ է տակալին, մարդոց հաւատոյ հանգանակը:

Այսպիսիներու համար հաշուեթիւնները ամէն բանէ վեր է: Հաշուեթիւններու ստորագրութիւնը սրբութիւն սրբոց էր:

Յայտնապէս Ամերիկայի մէջ, ամենահզօր տղարի ծննդավայրին մէջ, հաշուեթիւնները ամէն բանէ վեր իրողութիւն մը էր: Իսկ հիմա, քանի մը ամիսներէ ի վեր, ի յայտ եկաւ, որ հաշուեթիւնները ոչ թէ գիտական տուեալներու վրայ հիմնուած է, այլ վերածուած է սոսկ մը գրականութեան: Տակալին, գրական առասպելաբանական ճիւղին մէջ սեռն է եղեր: Յիքըն երեւակայական գրական սեռին մէկ ճիւղին վերածած են հաշուապահական գործերը:

Հսկայական տարողութեամբ ընկերութիւններ, հաշուապահական առասպելներ հիւսելով, իրենց շուրջ կը հաւաքէին մարդիկ, ասոնց մէջ խորին «հաւատք» եւ անհանձնաբեր կը յառաջացնէին՝ բնականաբար այս-

պիսիներուն քսակները բանալ տալու համար:

Հաշուապահական առասպելներու շնորհիւ ընկերութիւններ ցոյց կու տային, որ կարելի է մեծ - մեծ շահեր ապահովել իրենց մօտ ներդրում կատարելով: Եւ մարդիկ, տղարի դրախտին խոստումով, կը բանային իրենց քսակները առաւել-լագոյն չափով՝ գնելու համար բաժնետոմսեր... Իսկ նիւ Եորքի Ուոլ Սթրիթը վերածուած էր տեսակ մը նոր վատկանի: Մարդիկ այնքան խոր հաւատքով կը հետեւէին այնտեղի ելեւէջներուն:

Հարուստներ աւելի հարստանալու մարմալով, տարեցներ իրենց խնայողութիւնները ուղեւազած տեսելու հաւատքով կը գնեն (կը գրեն) բաժնետոմսեր՝ սակամ նա ընկերութեան: Մարդիկ իրենք զիրենք բրջանիկ կը համարեն ու ամէն բան վարդազոյն կը սեպեն: Եւ կամ այդպէս կ'ընէին ցարդ...

Անցնող մէկ երկու տասնամեակներուն ընթացքին տուելի պէս սկսան յայտնուիլ հսկայական ընկերութիւններ, յատկապէս՝ հաղորդակցութեան ասպարէզին մէջ: Բանի մը ամսուան ընթացքին երիտասարդ արկածախնդիրներ միլիոններու եւ միլիարդներու տէր կը դառնային: Չուրից ցաւ ասոնց երազներուն ցնդումը: Ուրիշ երեւոյթ մըն ալ կը բնորոշէր անցնող տասնամեակները: Սա ալ կամայ թէ բուն «ամուսնութիւն» էր ընկերութիւններու:

Միլիարդներով դրամագումարներ իրարու հետ կարգուելով կը կազմէին աստղաբաշխական թիւերով նոր դրամագրութիւններ: Այս բոլորը պարզապէս գլխու պարոյտ պատճառով իրականութիւններ էին: Այս ամուսնութեանց կնքահայրութիւնը կը վստահուէր հաշուապահներուն եւ հաշուեթիւններուն: Եկուր տես, որ այս «բաւար»ները խաչագողութեան ասպետներ են եղեր:

Գրական հեթաթիւներն ու առասպելները կը ծառայեն ուրախացնելու երեխաներն ու նոյնիսկ չափահաս ընթերցողները: Տարիներով մարդիկ կը յիշեն մանկութեան տարիներու իրենց կարգացած հեթաթիւները եւ կը մանկանան, կ'ուրախանան:

Հաշուեթիւնական առասպելաբանութիւնը, որ կը մանկացնէ պատահելու ու ընչապէս կը դժբախտացնէ զանոսանոսները, կը շնորհակցի հաշուապահական առասպելաբանութեան, համաշխարհային հսկայ ընկերութիւններ՝ պարզապէս միլիարդներ շարքերով, կամ միլիարդներու ծախսերը այսպիսի հեր ցոյց տալով մարդոց, կը հասնին նոյն արդիւնքին:

Պարզապէս այս հսկայ ընկերութիւնները «պերճուակարանութիւն» կը բանին եղեր... Հաշուեթիւններն ու հաշուապահութիւնը վերածուել են «պերճուակարանական գործառնութիւնները առաւելաբար կը հեղինակուին իրապաշտութեան եւ գործնապարտութեան բնորոշ» Ամերիկայի մէջ: Այն երկրին մէջ, որ ինքզինք կարգած է աշխարհի եւ նոյնիսկ տիեզերքի ոստիկան տնօրէն: Այն ինքն իրեն իրաւունք տուած է դատել բոլորը: Ինքն է, որ կը ճշդէ, թէ ո՞վ է ճիշդ, ո՞վ՞ սխալ: Ինք կը սահմանէ, թէ պետութիւնը մը որքանով է թափանցիկ, որքանով՝ անթափանց... Իսկ Ամերիկայի այսօրուան մեծամեծներն մեծագոյնները, ի յայտ կու գայ, որ իրենք ալ «պերճուակարան» կ'ըլլար կուսակցութեան եւ ժամանակակից սոցիալական կրթութեան արդիւնքն են: Կարելոք տղար զիգըն է: Բայց եկուր տես, որ «տոնարարէզն» ալ ցորենէ աւելի յարգէ բաղկացած է: Իսկ յարգը, ինչպէս որ պիտի ըսէր հայ բանաստեղծը, «գնում է, եւ ցորենը բնաւ չի մնում» հաշուեթիւնական այս «հեթաթիւներ»ուն. հսկայական դէգերուն տակ...

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈԶԱՐԵԱՆ ՎԱԽԵՐԱՑՈՒՑ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԻՆՍՊԻՐՔԸ

Հայաստանի կառավարութեան 31 Յուլիսի նիստին նախագահ Ռոպէրթ Քոչարեան ստորագրեց Ազգային ժողովին կողմէ 3 Յուլիսին որդեգրուած ընտրական օրէնսդրութիւնը և փոփոխութիւններ կատարելու մասին օրէնքը, որուն գործադրութեան դրուելէն հինգ օր ետք պիտի լուծուի ներկայիս գործող Ընտրական կեդրոնական Յանձնաժողովը եւ պիտի յառաջացուի նորը:

Նոր օրէնքով, մեծամասնական (անհատական առաջադրուածով) կարգով ընտրելիներու թիւը բարձրացաւ 56ի, իսկ համամասնականին (կուսակցական ցանկերով) նուազեցաւ 75ի: Այսպիսով, չեղեալ նկատուեցաւ 2000 թուականին խորհրդարանական ուժերու միջեւ գոյութիւն ունեցող քաղաքական համաձայնութիւնը, որ պատգամաւորական 131 տեղերէն 94ը կը յատկացնէր համամասնական կարգով ընտրուելիք թեկնածուներուն:

Ի տարբերութիւն ներկայիս գործող Ընտրական կեդրոնական Յանձնաժողովին, նոր յանձնաժողովը պիտի բաղկանայ ինը անդամներէ. մէկական անդամ պիտի նշանակուին Ազգային ժողովի մէջ խմբակցութիւն ունեցող վեց կուսակցութիւններու եւ զաշինքներու եւ երեք անդամ՝ նախագահին կողմէ: Այսպիսով, նոր յանձնաժողովը Ընտրական կեդրոնական Յանձնաժողովին մէջ ներկայացուցիչ ունենալու իրաւունքն կը զրկուին ՀՀԾ, Ինքնորոշում Միաւորումը, Ինչպէս նաեւ Հզօր Հայրենիք, Շամիրամ, Ժողովրդավարական Հայրենիք կուսակցութիւնները: Ընտրական կեդրոնական Յանձնաժողովի կազմին մէջ իրենց տեղերը կը պահեն Միասնութիւն դաշինքը, Օրինաց երկիր, ԱժՄ, Հ. Յ. Դ., Հայաստանի Համայնավար կուսակցութիւնները: Տեղեկացուեցաւ նաեւ, որ նորոշումի Ընտրական կեդրոնական Յանձնաժողովի մէջ իրենց գործունէութիւնը պիտի շարունակեն Հ. Յ. Դ-ի, Օրինաց երկրի եւ ԱժՄ կուսակցութիւններու ներկայացուցիչները:

Յայտնենք, որ վերոյիշեալ օրէնքը ուժի մէջ մտնելու պահէ մինչեւ 15 օր լուծուած պէտք է ըլլան Մարզային ընտրական յանձնախումբերը, որպէսզ յառաջացուին մարզային նոր՝ թիւով 56 յանձնախումբեր:

ՆՈՐ ՇՐՄԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՎԱՆՔԻ ՕՐԵՐ»

Երուսաղէմի մէջ վերջերս վերահրատարակուած է Ծէն-Մահի (բուն անունով՝ Թորգոմ արք. Մանուկեան) «Վանքի օրեր» բանաստեղծութիւններու գիրքը՝ վերատեսութեան ենթակուած տարբերակով: Նոր հրատարակութիւնը, որ նաեւ կը կրէ «Մէլըր կամեր» ենթախորագիրը, կը բաղկանայ երկու բաժիններէ: առաջին բաժինին մէջ ներկայացուած են հեղինակէն բանաստեղծութիւնները՝ հայերէնով եւ անգլերէն թարգմանութեամբ, իսկ երկրորդին մէջ Ալիք Քէշիշեան անգլերէնով կատարած է բանաստեղծութիւններուն ներկայացումը ու վերլուծումը: Քէշիշեան նաեւ կատարած է բանաստեղծութիւններուն անգլերէն թարգմանութիւնը:

ԶԲՕՍԱՇՐՋԻԿՆԵՐՈՒՆ ԹԻԷՐ ՊԻՏԻ ԶՆՈՒԱԶԻ

Ըստ Հայաստանի առևտուրի եւ տնտեսական զարգացման փոխ նախարար Արա Պետրոսեանի, ներկայիս Հայաստանի մէջ գործող պանդոկները տեղեր տրամադրելու համար կանխավճար չեն պահանջը ճամբորդական ընկերութիւններէ: Մամուլը ասուլիսի մը ընթացքին ան նաեւ նշեց, որ այս պատճառով ճամբորդական գործակալութիւն- պանդոկ յարաբերութիւնները ներկայիս կը գտնուին միջազգային չափանիշներուն համապատասխանող մակարդակի վրայ: Ա. Պետրոսեան տեղեկացուց, որ զբօսաշրջիկներուն տրամադրուող տեղերուն գինը զգալի կերպով նուազած են, որովհետեւ, եթէ երկու տարի առաջ գոյութիւն ունէին քանի մը պանդոկներ, որոնք մեծաշնորհալի գիներ կը թելադրէին, այժմ պանդոկներուն թիւը կը հասնի 17-18ի:

Ա. Պետրոսեան կը կանխատեսէ, որ այս տարի Հայաստան պիտի այցելէ նոյնքան զբօսաշրջիկ, որքան նախորդ՝ Հայաստանի մէջ ըրիտաբանութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի տարին: Նման յոյսեր կը ներշնչէ այս տարուան առաջին եւամսեակի իրճակագրութիւնը, որուն համաձայն, Հայաստան այցելած է 22 հազար զբօսաշրջիկ՝ անցեալ տարուան նոյն ժամանակաշրջանի 19 հազար զբօսաշրջիկին փոխարէն:

www.lemagan.com



«ՋԱԽԽԵ» ԸԱՅՐԵՆԱԿԱԿԱՆ ՄՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱԿԻ ԸԱՍՏԱՏՈՒՄԿ

ՋԱԽԽԵԱՆ ՔԱՎԱԿԱՆ ՍԱԳՆԱՊՆԵՐԸ ՄԻԱՅՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԵՆ

«Ռուսիոյ եւ Վրաստանի յարաբերութիւնները միշտ ազդած են Ջալախբէ հայութեան վրայ, եւ գլխաւոր պատճառը Ախալքալաքի ուսուական ուսումնական է», ըսած է «Ջալախբ» հայրենական միութեան նախագահ Յովհաննէս Ալվազեան, «Նոյեան Տալան» լրատու գործակալութեան հետ ունեցած զրոյցի մը ընթացքին:

Ըստ Յ. Ալվազեանի, բացառութիւն չէ նաեւ ուսումնական յարաբերութիւններուն ծիրին մէջ վերջին շրջանին նկատուած սրումը՝ Փանքիսի կիրճի դէպքերուն պատճառով: Սակայն Ջալախբի մէջ միշտ արթնամտութեամբ կը գնահատուին այդ պահերը:

Վերլուծելով վրացահայրութեան դիմագրաւած ներկայ տագնապներուն տուն տուող պատճառները, Յ. Ալվազեան դիտել տուած է, որ Վրաստանի իշխանութիւններուն հանդէպ հայ բնակչութեան վերաբերումը եղած է եւ կը մնայ բնականոն եւ հանդուրժողական, յատկապէս, երբ նկատի առնենք ընկերային-տնտեսական այն ծանր պայմանները, որոնք տիրապետող են Սամցխէ-Ջալախբի շրջանին մէջ: Բայց եւ այնպէս ճիշդ է, որ շրջանը յուզող խնդիրները գնահատուին միայն իբրեւ ընկերային-տնտեսական: Հիմնական հարցը բնակչութեան ապահովութիւնն է, որուն երաշխիքը Ախալքալաքի ուսուական խորհրդին է Ջալախբի ժողովուրդին համար: «Ռազմակայանի մէջ աշխատանքի շնորհիւ մօտ երկու հազար ընտանիք ապահովուած են բնական կենսապայմաններ իրենց համար: Սակայն գլխաւորը այդ չէ, այլ այն, որ Ջալախբի հայութիւնն իր անվտանգութիւնը չի վստահի վրացական իշխանութիւններուն, որոնք իրենց ազգային քաղաքականութիւնը կը վարեն շրջանին մէջ»:

Շարունակելով «Ջալախբ» միութեան ներկայացուցիչը դիտել տուաւ, որ տեղական ինքնակառավարման մարմիններու ժողովրդավարական ընտրութիւնները երեւութական են, իշխանութեան ոչ մէկ լծակ ունին, իսկ բոլոր լծակները կեդրոնացած են Վրաստանի նախագահի ներկայացուցիչի վարչակազմին ձեռքը, իսկ նշեալ վարչակազմին մէջ հայեր գոյութիւն չունին: Շրջանային ժողովներուն, որոնք կը մասնակցին գիւղական համայնքներու ներկայացուցիչները, իւրաքանչիւր վրացական գիւղէ մէկ ներկայացուցիչ կը մասնակցի, եւ նոյնպէս մէկ ներկայացուցիչ՝ մէկ համայնքի մէջ խմբուած հայկական շարք մը գիւղերէ: Ասկէ կը հետեւի, որ Շրջանային ժողովի որոշումներ ընդունելու պահուն ձայնեղու մօտաւորապէս 30 առ հարիւր կը պատկանի վրացի ներկայացուցիչներուն, որոնք բնակչութեան միայն 4-5 առ հարիւր կը կազմեն: Հակառակ յանրապական դիմումներու՝ դարձեալ չզբանցուեցաւ «Վիրք» հայկական կուսակցութիւնը: «Այսպիսի մեթոտներով Վրաստան կ'ամրացնէ իր պետութիւնը, յայտարարեց Ալվազեան՝ ընդգծելով, որ Ջալախբի հայութեան ենթադրեալ անջատողական տրամադրութիւններուն մասին եղած բոլոր խօսակցութիւնները կը բխին ոչ թէ Ջալախբէն, այլ Թիֆլիսէն:

Իր խօսքին մէջ «Ջալախբ» ղեկավարը կարեւորութեամբ անդրադարձաւ նաեւ Հայաստանի իշխանութիւններուն՝ Ջալախբի հայութեան նկատմամբ դիրքորոշումին եւ նշեց, որ իշխանութիւնները պէտք է հարցը դիտեն ոչ միայն ընկերային-տնտեսական դժուարութիւններու դիտակիւնէն, այլեւ առաջին հերթին՝ ուղղակի արկածախնդրութեան տեսակէտէն, եւ օրինակի համար, սկսին մշակել Հայաստանը եւ Ջալախբը միացնող ճամբաներու վերակառուցման նպատակով շրջանային նախագիծերը: Հայաստանի ղեկավարութիւնը նաեւ պէտք է իր յստակ դիրքորոշումը ունենայ Վրաստանի մէջ կացութեան վստածարացման պարագային, շեշտեց Յ. Ալվազեան:

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

● Իմաստասէր Շահան Պէրպէրեանի անդրանիկ գաւազը՝ Արտաւազը, յետ կարճատեւ հիւանդութեան, 10 Յուլիսին իր մահականացուն կնքեց Փարիզի մէջ:

Ծնած էր Վառնա, 1923ին: Ընտանիքին հետ անցած է Գահրէ, ապա՝ Պէյրութ եւ Փարիզ: Փարիզի մէջ ան կը հետեւի Գեղարեւոստից վարժարանի դասընթացներուն, որմէ ետք «Կրանտ շօմիէր» ակադեմիային աշխատանքի ղեկավարը կը դառնայ: Տուած է նկարչական ցուցահանդէսներ եւ ստացած՝ «Արեւստներու երոպական ակադեմիայի» մրցանակը՝ 1967ին, եւ սպայից աստիճանը՝ Պրանսայի Գեղարեւոստից եւ մշակութային արժէքներու եւ արուեստներու երոպական ակադեմիային:

Կատարած է բազմաթիւ զարդարանքներ հայկական եկեղեցիներու մէջ՝ Ալֆրոյիլի, Լիոն, Տեսին, Փարիզ եւ Երուսաղէմ: 20 տարիէ ի վեր Աւիստիոն հաստատուած էր, ուր նաեւ հայոց լեզուի եւ պատմութեան ուսուցիչ էր: Փարիզ անցուցած տարիներուն հասարակական կենքի գործօն մասնակից եղած է: Աշխատակցած է 1973ին լոյս տեսած «Հայ բանաստեղծութեան ծաղկաբաղին» Ռուբէն Մելիքի ղեկավարութեամբ:

● Յրանալի Նիս քաղաքի «Պարսմեան» վարժարանի 2001-2002 կրթական տարեշրջանը ւարժարանի յաջողութեամբ: Վերջին տարիներուն վարժարանի աշակերտութեան թիւը հետադարձաբար աւելցած է՝ հասնելով 60ի: Այս տարի եօթը աշակերտներ նախալրարանէն շրջանաւարտ ելած են: Յայտնուեցաւ, թէ «Պարսմեան» վարժարանը կը կիրարկէ Յրանալի կրթական գաղափարութեան պահանջած ծրագիրը, որուն զուգահեռ կը դասուանուի ինչ-իչ լեզուի եւ պատմութիւնը:

«Ա.Չ.Գ.Ա.Կ»-ի
ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«Ա.Չ.Գ.Ա.Կ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել
հետեւեալ թիւերու. - 258526, 260115 եւ 241274:

ՇՐՋԱՊՏՈՅ ՂԵՊԻ ԿԻԼԻԿԻԱ

Սեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Բրիտանական Դատարարակութեան Բաժանմունքի կազմակերպութեամբ, տեղի պիտի ունենայ չորսօրեայ շրջապայտոյ դէպի Կիլիկիա,

ԵՐԵՎԱՆԻ 3 ՍԵՊՏԵՄԲԵՐԵՆ ՄԻՆՉԵՒ ՈՒՐԲԱՑ, 6 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2002:

Շրջապայտոյ կ'ընդգրկէ կիլիկեան կարգ մը քաղաքներ, ինչպէս՝ Ատանա, Կապադոկիա, Կեսաբիա, Էվբլի, Կաթմոն, Սիս՝ որ եղած էր Կիլիկիոյ կաթողիկոսանիտ քաղաքը, եւ այլ շրջաններ:

Հետաքրքրուողները կրնան դիմել ՏԻԿԻՆ ՎԵՐԺԻՆ ՍԻՐԱՆՈՍԵԱՆԻ՝ հեռաձայնելով 01 - 894263, 01 - 262745 եւ ՏԻԿԻՆ ԷՕԵՏԵ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ՝ 03 - 606605 թիւերու:

Արձանագրութեան վերջին պայմանագրով՝
14 Օգոստոս 2002:

**ԵՐԽՍՈՆԵԱԿԱՆ
ՂԱՄԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆԱՄԻԷ**

Մշակութային Էջ

ՄԵՆՔ ԵՒ ՄԵՐ ԱՐԺԷՔՆԵՐԸ

Կերպարուեստի պարագային, միջազգայնօրեն գնահատում մեր արժեքները արժեքները եւ յատկապես նոր սերունդին ծանօթացնելու նուիրակ գործին մէջ ոչ միայն ուշացած, այլեւ՝ փաստօրէն... թերացած ենք:

Տրուած ըլլալով, որ կերպարուեստը լեզու չունի, ան շատ աւելի դիրքին կը տարածուի, քան գրականութիւնը: Արդարօրէն, հայ գրականութիւնը կը դասաւանդուի՝ իբրեւ առաջնահերթ դաս հայ դպրոցներուն մէջ, շեշտելով անոր կարեւորութիւնը հայեցի դաստիարակութեան մէջ:

Սակայն, հակառակ անոր որ սփիւղաբան կերպարուեստագետները թէ՛ որակով եւ թէ քանակով անհամեմատ աւելի բարձր են ու շատ, հայ կերպարուեստի պատմութիւնը (մանաւանդ ժամանակակից) չի դասաւանդուիր հայ դպրոցներուն մէջ:

Մշակութային միութիւնները եւս պէտք եղած չափով չեն գնահատեր եւ արժեքներ սփիւղաբան կերպարուեստը:

Մինչդեռ Սփիւղի մէջ ունինք բազմաթիւ կերպարուեստագետներ, որոնք որեւէ ազգի եւ երկրի մշակոյթին պատիւ բերող արուեստագետներ են: Անոնցմէ շատերուն անուններն իսկ լսուած չեն, նոյնիսկ մտաւորական դասին մօտ:

Մ. Մահանգներ կը հպարտանան իրենց Փուշմանով, Ռուբէն Նաթիկով, Հենրի Լայրենով, Ռաուլ Հէյկով եւ տակաւին շատ ուրիշներով...:

Փրանսան կը պարծնայ էտկար Շահինով, Գառնույով եւ կամ ժամանակով...:

Իտալիան Ձիւթները կը նկատ Իտալիոյ Ի. դարու լաւագոյն գեղանկարիչներէն մէկը...:

Փօլ Կիրակոսեանը կը նկատուի «Արեւելքի արդի նկարչութեան դարպաս» եւ կամ՝ «Լիբանոնի առաքելը»...:

Ու դեռ կարելի է բուռն տանակներով անուններ, որոնք շատ աւելի գնահատուած ու նախընտրուած են օտար արուեստասէր շրջանակներու մէջ, քան մեր մէջ:

Արշիլ Կորքի - Արդոյանցի մեծագոյնն է այդ անուններուն: Անոր մասին գրուած են տասնեակներով հատորներ ու պատկերաքիրքեր, սակայն համեմատած ընդհանուրին հետ, հայերու բաժնի շատ քիչ է անոր մէջ:

Պէտք է ընդունիլ, որ վերջին տարիներուն հայ մամուլը բաւական լայն տեղ տրամադրեց Արշիլ Կորքիի մասին լոյս տեսած գիրքերուն եւ անոր մասին գրուած յօդուածներուն, եւ այսօր Արշիլ Կորքի անունը շատերու համար արդէն իսկ որոշ բան կ'ըսէ:

Սակայն այս բոլորը նուազագոյնն են, զոր մենք կ'ընենք անոր անունը տարածելու եւ հպարտութիւն առթելու նոր սերունդին մէջ:

Արշիլ Կորքին միակը չէ: Ինչպէս նշեցինք, տասնեակներով անուններ կան, որոնք արժանի են գնահատուելու նոր սերունդին:

Նոյնը կարելի է բնել երաժշտութեան, թատրոնի եւ արուեստի մնացեալ մարզերուն մասին:

ՄՈՎՍԵՍ ԾԻՐԱՆԻ

Վերջին տարիներուն Մ. Նահանգներու մէջ հրատարակուեցան յատկանշական երկու գիրքեր՝ Նուիրուած Արշիլ Կորքի-Արդոյանցի ստեղծագործական կենցաղին, Մաթիո Սփինուրի «Բարձունք» եւ Նուիրուած Մաթիոյ «Սեւ Երեւան»:

Այս գիրքերուն մասին «Տր Նուիրուած»-ի մէջ լոյս տեսած է յօդուած մը, զոր թարգմանած է Անիտա Դոլուխանեան: Իր շահեկանութեան համար յօդուածը կ'արտատպենք հայրենի մամուլէն:

Տարին 1908 էր, վայրը՝ Խորհրդով, մի փոքրիկ գիւղ՝ փռուած ծովի մակերեսովից 5500 ոտնաչափ բարձրութեան վրայ, Արեւմտա-Կասպիական ծովափին հարազատ լեռների ու հովիտների գրկում: Սեղրակ Արդոյանցի՝ յաջողակ արհեստաւորների ընտանիքից սերած քրիստոնեայ հայը, որոշում է գաղթել Ամերիկա: Մի առաւօտ նա արթնացնում է փոքրիկ որդուն ու աղջկան, տանում նրանց վանայ լճի ափին գտնուող ցորենի արտը: Նստած գետնին՝ նրանց կիրում են իրենց վերջին ուտելիքը՝ խաչած ձու եւ լաւաշ: Նախքան հրաժեշտի համար, Սեղրակը հնգամեայ որդուն՝ Մանուկին է նուիրում զոհաբարձու աւանդական սրածալը տրեխներ, յետոյ հեծնում ձին եւ անհետանում մշուշի մէջ՝ այլեւս չվերադառնալու համար:

Երկու տարի անց Սեղրակի երիտասարդ կինը՝ Շուշանիկ Տէր Մարտիրոսեան-Արդոյանցի, երեխաների հետ տեղափոխուում է վան՝ նահանգի կենտրոնը: Նա չէր շփուում մամուլում ընտանիքի հետ, որն անբարեացակամ էր Սեղրակի բացակայութեան պատճառով: Տեղափոխութիւնը ժամանակակաւոր էր: Տարիների անցում է էին, եւ 1915ին թուրքերը, օգտուելով խոշոր տէրութիւնների միջեւ ծագած մեծ պատերազմից, սաստկացնում են հալածանքը քրիստոնեայ հայերի նկատմամբ: Օսմանեան կառավարութեան նպատակն էր կայսրութիւնից վտարել ոչ թուրք բնակիչներին՝ բնաջնջելով 12 տարեկանից բարձր արական սեռի բոլոր մարդկանց: 1915-1918 թուականների ընթացքում մէկուկէս միլիոն հայ ոչնչացաւ բռնագաղթի կամ նախճիրի միջոցով, Հայոց եղեռնը դարձաւ կոշտ նախորդեց Հիթլերի ցեղասպանութեանը:

